

Բանալի բառեր՝ հարկային համակարգ, հարկային վարչարարություն, հարկային բեռ, համախառն ներքին արդյունք, հարկային քաղաքականություն, հարկային համակարգ:

ՀՏԴ 336.22:330.101.54

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՀԱՎԱՍԱՐԱԶՉԱՓ ԵՎ ԱՐԴԱՐԱՑԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ատենախոսության թեմա՝
Հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում

Արթուր ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
հայցորդ

Գիտական ղեկավար՝
Վարդան ԲՈՍՏԱՆՉՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հարկային համակարգը տնտեսագիտական այն կատեգորիաներից է, որը բավականաչափ լավ հետազոտված է, և որի հիման վրա տեսական հզոր ուղղություն է ձևավորվել: Մյուս կողմից՝ այս ոլորտում դեռևս շատ են տարակարծությունները, տեսական լուծումները կիրառական հարթություններում ընթացում ծագող հիմնախնդիրները, «հարկային համակարգ» երևույթի համակողմանի բնութագրման դժվարությունները: Սույն վերլուծության մեջ համառոտ կերպով փորձում ենք բացահայտել հարկային բեռի՝ գիտական շրջանակներում բավականին ծեծված հիմնախնդիրները և առաջադրել մեր մոտեցումները:

Ընդհանուր ըմբռնմամբ՝ հարկային բեռը կարելի է դիտարկել որպես հարկերի վճարման նպատակով միջոցների առանձնացման, գործունեության այլ հնարավոր ուղղություններից դրանց դուրսբերման արդյունքում ծագող տնտեսական սահմանափակումների մակարդակ, աստիճան կամ չափ:

Մակրոմակարդակում հարկային բեռը հանդես է գալիս որպես տնտեսության մեջ և ամբողջությամբ վերցված՝ հասարակության մեջ հարկերի դերը բնութագրող ցուցանիշ, որը գնահատվում է հարկային եկամուտների ընդհանուր գումարը ՀՆԱ-ին հարաբերելու միջոցով: Այլ կերպ ասած՝ հարկային բեռն արտացոլում է հասարակության կողմից ստեղծված արդյունքի այն մասը, որը վերաբաշխվում է բյուջետային կառուցակարգերի միջոցով:

Հարկման արդյունավետությունը հարկման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Սակայն դրա մակարդակի վերաբերյալ միասնական մոտեցում գոյություն չունի, և տնտեսագետները տարբեր դիրքերից են մեկնաբանում այս երևույթը: Պարզ է, որ արդյունավետության մակարդակը պետք է բարձրացնել: Բայց այս գործընթացի իրականացման եղանակները տարակարծությունների տեղիք են տալիս [5, pp. 31-38]:

«Հարկման արդյունավետություն» հասկացությունը պետք է միանշանակ հասկանալ: Չէ՞ որ այդ տերմինն արդեն հակասություն է պարունակում, քանի-որ որքան ծանր է հարկատուների հարկային բեռը, այնքան ֆինանսական տեսանկյունից ավելի ապահովված է պետությունը: Այս խնդիրը ևս տարբեր արձագանքներ է գտնում տնտեսագիտության մեջ: Այսպես, շուկայական տնտեսությամբ երկրների հարկային քաղաքականության իրականացումը գործնականորեն հանգեցնում է այն եզրակացության, որ հարկային արտոնությունները կրճատելով և բարձր հարկադրույթներ հաստատելով՝ կարելի է եկամուտների բարձր մակարդակի հասնել միայն կարճաժամկետ հատվածում: Այնուհետև տեղի է ունենում արտադրության ծավալների պակասեցում և արձանագրվում են տնտեսական այնպիսի գործընթացներ, որոնք, ի վերջո, բերում են պետական բյուջեի եկամուտների ծավալի անխուսափելի նվազում: Մյուս կողմից՝ մի շարք հայտնի տնտեսագետներ պնդում են, որ հարկային բեռի նվազեցումը կարող է երկրի տնտեսությանը լուրջ վնասներ հասցնել: Մասնավորապես՝ Ա. Լաֆֆերի կարծիքով՝ մի կողմից հարկային դրույթների կրճատումը հնարավորություն է տալիս բարձրացնել աշխատավարձը, ինչի արդյունքը արտադրության արդյունավետության, ձեռնարկության շահութաբերության և ապրանքաշրջանառության աճն է, իսկ մյուս կողմից էլ՝ հարկային դրույթների աճը կրճատում է եկամուտների ծավալը, որոնք մնում է հարկատուի մոտ հարկերը վճարելուց հետո: Այս ամենի հետևանքով անխուսափելիորեն կրճատվում են ներդրումներն արտադրության մեջ, ինչի հետևանքով էլ կրճատվում է արտադրական անձնակազմի աշխատավարձը: Ծանր հարկային բեռը նպաստում է ստվերային տնտեսության ծավալների աճին: Այլ կերպ ասած՝ հարկային բեռի անցանկալի հետևանքներից խուսափելու համար տնտեսվարող սուբյեկտները փորձում են իրենց եկամուտների իրական մակարդակը թաքցնել: [4, pp. 68]

Ա. Լաֆֆերի կարծիքով՝ ձեռնարկության սահմանային հարկային դրույթաչափը կարող է լինել եկամուտների առավելագույնը 30%-ի չափով: Ըստ տնտեսագետի՝ այդ սահմաններում տեղի է ունենում բյուջետային եկամուտների աճ: Իսկ 40-50% եկամտազանձման դեպքում կրճատվում են ձեռնարկության եկամուտները, բնակչության ինստիտուցիոնալները: Հարկերի կրճատումը խթանում է տնտեսության զարգացմանը, ինչը իր հերթին նպաստում է պետական եկամուտների աճին ընդլայնված հարկային բազայի շնորհիվ, այլ ոչ թե հարկային դրույթաչափերի աճի շնորհիվ: [4, pp. 69]

Վերը շարադրվածից կարելի է եզրահանգել, որ հարկային բեռի սահմանաչափի ճիշտ որոշումը շատ կարևոր և միաժամանակ շատ բարդ խնդիր է: Ակնհայտ է, որ հարկային բեռի ծանրությունը որոշվում է ոչ միայն հարկադրույթների բարձր մակարդակով, այլ նաև վարչարարության ցածր մակարդակով, հարկային օրենսդրության և հարկերի կիրառման բնականոն մեթոդների խախտման, անհավասար և անարդարացի հարկման հաճախականությամբ:

Ենթեք, որ տնտեսվարող սուբյեկտները միջոցներ և ժամանակ են ծախսում հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հաշվարկների իրականացման, հայտարարագրերի լրացման, փաստաթղթերի ներդրողական և այլ ծառայությունների ներգրավման ու այլնի համար: Մյուս կողմից՝ պետությունը ևս ծախսում է ֆինանսական միջոցներ ու ժամանակ՝ անբարեխիղճ հարկատուներին պատասխանատվության ենթարկելու վերահսկողություն

հաստատելու և նմանատիպ այլ գործունեություն ծավալելու վրա: Այս ամենի արդյունքում հասարակությունը կորուստներ է կրում: Հետևաբար՝ հարկման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է այդ ծախսերը հասցնել նվազագույն մակարդակի: Անհրաժեշտ է ընդգծել, որ հարկային համակարգի արդյունավետությունը կախված է նրանից, որ անհրաժեշտ է կենտրոնանալ ազգային տնտեսական շահերի և հարկային վարչարարության համատեղելիության ուղղությամբ:

Ընդ որում՝ լավագույն հարկային վարչարարությունը չի ենթադրում միայն ամալվելագույն մուտքեր ապահովող ռազմավարության կիրառում: Ոչ պակաս կարևոր է, թե ինչ մեխանիզմներով են հավաքագրվում հարկային եկամուտները և ինչպես են դրանք ազդում հասարակության բարեկեցության ու հարկատուների ուղղահայաց հավասարության վրա:

Այն դեպքում, երբ հարկային վարչարարության համակարգը թույլ է, պետական մարմինները կարող են հարկային բեռը կենտրոնացնել անուղղակի հարկերի հարթությունում՝ դրանով իսկ արհեստականորեն ուժեղացնելով հարկային համակարգի ձևախեղող ազդեցությունն ու մեծացնելով հարկատուների միջև անհավասարությունը: Հատկանշական է, որ հարկային բեռի մակարդակն ու բաշխումը հանդիսանում են հարկային վարչարարության որակի ելակետային և համեմատաբար պարզ բնութագրիչներ: [3, pp. 7-9]

Պետական ծառայությունների սպառողներն ինտուիտիվ որոշում են հաշվարկված հարկային բեռի քանակի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը հարկերի վճարման արդյունքում ստացված հասարակական բարիքների քանակին, քանի որ հասարակական բարիքները կարող են չափվել միայն բյուջետային ծախսերի միջոցով: Վերջիններիս վերաբերյալ տվյալները կամ անհասանելի են հարկ վճարող հիմնական զանգվածներին, կամ ծախսերը նրանց կողմից չեն ընկալվում որպես արժեք, իսկ հարկերը՝ պետական ծառայությունների արժեքի չափորոշիչ: Հենց նման սուբյեկտիվ ընկալումն էլ, կարելի է ասել, որ ընկած է հարկային վարչարարության ամենահիմքում: Օրինակ՝ Սկանդինավյան երկրներում առկա է Եվրոպայում ամենաբարձր հարկային բեռը, որը չի գայրացնում հարկ վճարողներին: Նրանք պատրաստ են վճարել բարձր հարկեր, քանի որ իրենց վրա իրականում զգում են պետական սոցիալական և տնտեսական աջակցություն՝ հասարակական բարիքների և տնտեսական օգուտների ձևով: Այս երկրներում բնակչության 80%-ը միջին խավն է, ինչը պետության արդյունավետ հարկային քաղաքականության գրավականն է: [6]

Հատկանշական է, որ ՀՀ-ում հարկային համակարգի կազմավորման և զարգացման ողջ ընթացքում պետական բյուջեի հարկային եկամուտների ապահովման խնդիրը լուծվել է անուղղակի հարկերի միջոցով: Ծիշտ է վերջին տարիներին ուղղակի հարկերի դեռևս փոքր-ինչ բարձրացման միտում է դրսևորում, սակայն անուղղակի հարկերը, և առաջին հերթին՝ ԱՎՀ-ը, շարունակում են առանցքային դերակատարություն ունենալ, ինչը նաև սպառողների վրա հարկային բեռի փոխանցման ընդարձակ հնարավորություններ է ընձեռում:

Դրա վառ վկայություններից է հատկապես խոշոր հարկ վճարողների հարկերի կառուցվածքում ուղղակի հարկերի նկատմամբ անուղղակի հարկերի տնտեսագիտորեն անտրամաբանական ու հիմնավորվածությունն ջունեցող գերակշռությունը:

Օպտիմալ հարկային բեռի սահմանում պետության կարևորագույն մակրո-տնտեսական խնդիրներից մեկն է: Ընդ որում՝ օպտիմալ ասելով պետք է հասկանալ հարկային բեռի այն մակարդակը, որն ապահովում է ամալվելագույն տնտեսական աճ:

Հարկային բեռի օպտիմալացումը ենթադրում է պետության կողմից հարկային բեռի գնային տարրերի պետական օրենսդրական սահմանում:

Հարկային բեռի հավասարաչափ և արդարացի բաշխումը հարկային քաղաքականության մշակման և իրականացման կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում: Ըստ ԵՄ-ի «Հրահանգ» դրանով մեծապես պայմանավորված է ինչպես հարկային համակարգի արդյունավետ գործունեությունը, այնպես էլ տնտեսության բնականոն զարգացումը:

Այս խնդրի հետ կապված՝ ամալվել լայն տարածում ունի այն տեսակետը, ըստ որի որքան թեթև է հարկային բեռը, այնքան արագ է զարգանում երկրի տնտեսությունը:

Տնտեսավարող սուբյեկտների վրա հարկային քաղաքականությունն ունի թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ազդեցություն: Առաջին դեպքում այդ ազդեցությունը դրսևորվում է այն բանում, որ հարկատուները որոշակի գումար են փոխանցում պետական ֆոնդեր, ինչի հետևանքով նույն չափով նվազում է նրանց բարեկեցության աղբյուրը: Անուղղակի ազդեցությունն այն է, որ հարկման հետևանքով ձևափոխվում է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական վարքագիծը, որն իր հերթին ազդում է մասնավոր հատվածի կողմից սպառման, ինստիտուցիոնալ և ներդրումների, գործարար ակտիվության վրա: Հետևաբար՝ հարկերը հանգեցնում են արդյունավետության կորուստների, դրանք էլ ազդում են քաղաքացիների բարեկեցության վրա [4, p.2]: Եթե հարկային քաղաքականության ուղղակի ազդեցության դեպքում հասարակությունը, որպես մեկ ընդհանուր ամբողջություն, բարեկեցության նվազում չի ունենում, այլ տեղի է ունենում հարստության բաշխում, ապա անուղղակի հարստության ժամանակ հասարակությունը կրում է որոշակի կորուստներ:

Հետևաբար՝ հասարակության տեսանկյունից հարկային բեռն ավելի մեծ է, քան պետությանը հարկերի տեսքով վճարված գումարների մեծությունը, քանի-որ գրեթե բոլոր հարկատեսակները ձևափոխում են տնտեսավարող սուբյեկտների տնտեսական վարքագիծը: Վերջինը չէր փոխվում միայն այն դեպքում, եթե հարկերն իրենցից ներկայացնեին կայուն մեծություն՝ անկախ տնտեսական որևէ փոփոխականից:

Պետք է նշել, որ գոյություն ունի «ավելցուկային հարկային բեռ»՝ հասկացությունը, որը ի հայտ է գալիս անուղղակի հարկերի հետ կապված հարկային բեռի բաշխման ժամանակ: Ամերիկյան տնտեսագետների կարծիքով՝ ավելցուկային հարկային բեռը նշանակում է հասարակության արդյունավետության կորուստ՝ հարկի գանձման հետևանքով: [6] Դա հասարակության մաքուր շահույթի կորուստն է, քանի որ հարկման ենթակա ապրանքի արտադրությունն ընկնում է և հասնում նախկին հավասարակշիռ մակարդակին:

Օրինակ՝ առանց հարկի 4 պայմանական միավոր արժեքով մեկ շիշ գինու հավասարակշռված առաջարկը կազմում է 15 մլն շիշ: 1 պայմանական միավորի չափով հարկ մտցնելու դեպքում, ապրանքի շուկայական արժեքը դառնում է 4.5 պայմանական միավոր, ինչը հավասարակշռված առաջարկը հասցնում է 12.5 մլն շիշ գինի 15 մլն փոխարեն: Թերապատման և թերարտադրության արդյունքում հասարակությունը կորցնում է 2.5 մլն պայմանական միավոր՝ հարկ ներդնելու հետևանքով, չնայած հասարակությունը պատրաստ է վճարել 2.5 մլն շիշ գինու 4 պայմանական միավոր:

Սովորաբար ավելցուկային հարկային բեռի բացասական ազդեցությունը տնտեսության վրա ավելի շատ է: Հասարակության համար մեղմացված կորուստները պետք է կազմեն ոչ թե 2.5 մլն պայմանական միավոր, այլ 10 մլն պայմանական միավոր, այսինքն՝ 4 պայմանական միավոր գնով 2.5 մլն շիշ: Եթե արտադրվեր և սպառվեր 15 մլն գինու շիշ 4 պայմանական միավոր գնով, ապա հասարակության սահմանային հատույթը կկազմեր 60 մլն պայմանական միավոր՝ 4.5 մլն պայմանական միավոր նոր արժեքով, և գինու առաջարկը կլիներ 12.5 մլն շիշ՝ 56.25 մլն պայմանական միավոր: Այս դեպքում պոտենցիալ սահմանային հասույթի կորուստները կլինեն 2.5 մլն պայմանական միավոր: Հարկային բեռը կոչվում է ավելցուկային, քանի որ այն իր հետևից բերում է հասարակության պոտենցիալ սահմանային և մաքուր հասույթի կորուստներ: [6]

Ամենից հաճախ ավելցուկային հարկային բեռը առաջացնում է մաքուր շահույթի կորուստ: Մեր օրինակում ներդրված անուղղակի հարկերի պոտենցիալ բեռը, որը կրում է հասարակությունը, մեծ է բյուջեի փաստացի մուտքերից մաքուր շահույթի

կորստի չափով՝ 2.5 մլն պայմանական միավորով: Նման ձևով անուղղակի հարկերի պոտենցիալ բեռի և դրանց փաստացի մուտքերի տարբերությունն իրենից ներկայացնում է ավելցուկային հարկային բեռի բացարձակ մեծությունը: [7, c. 8]

Ավելցուկային հարկային բեռ=Պոտենցիալ հարկ – Հարկային մուտքեր

Ավելցուկային հարկային բեռը կարելի է նաև դիտարկել ավելի լայն ոչ միայն անուղղակի հարկերի հետ կապված, այլ նաև ամբողջական հարկերի: Այս դեպքում այն կկազմի պոտենցիալ, հաշվարկված և փաստացի վճարված հարկերի գումարների միջև տարբերությունը: Նման ավելցուկային հարկային բեռը ևս բնութագրվում է հասարակության ամբողջական եկամուտների կորստով:

Բացասաբար ազդելով հարկվող ապրանքների սպառման վրա՝ հարկերի կիրառումը հանգեցնում է փոխարինման էֆֆեկտի առկայության: Նշված երևույթից գերծ մնալու առումով ավելի նախընտրելի է առանձին ապրանքների գծով կիրառվող հարկերի փոխարինումը միասնական դրույթաչափ ունեցող ԱԱՀ-ով: Այդ դեպքում ապրանքների հարաբերական գները չեն փոխվի:

Հարկման արդյունավետության գնահատման չափանիշ է նաև վարչարարության և հարկատուների կողմից հարկային օրենսդրության պահանջների կատարման հետ կապված ծախսերի գնահատումը: Դա շատ կարևոր հանգամանք է, քանի-որ վարչարարության ցածր մակարդակով հարկային համակարգն անարդյունավետ է և անարդարացի: Ուստի՝ հարկային համակարգի արդյունավետ գործունեության կազմակերպման գործընթացքում պետք է հաշվի առնել նաև այս հանգամանքը: Օրինակ՝ այս առումով ճիշտ է որոշակի գումարային չափով շրջանառություն ունեցող հարկատուներին ԱԱՀ-ով հարկումից ազատելը՝ այն փոխարինելով հաստատագրված վճարով, քանի-որ գումարային առումով փոքր հարկատուների վերահսկումը պետության կողմից կարող է թանկ նստել և չարդարացնել արված ծախսերը [4, c. 9-16]:

Հաշվի առնելով վերոնշյալ հավելյալ բեռի առկայությունը՝ հարկման արդյունավետությունը կարելի է բնորոշել որպես հարկային եկամուտների նկատմամբ պետության կողմից պահանջարկի այնպիսի մեխանիզմների և մեթոդների միջոցով ապահովում, որոնք նվազագույնի են հասցնում պետության և հարկատուների ծախսերը՝ առանց տնտեսական վարքագծի փոփոխության:

Օգտագործած գրականություն

1. Бекетова О.Н. Налоговое бремя и налоговые пределы в современной России. В науч. сб.: Финансовые проблемы переходной экономики /Под ред. С.В. Барулина, В.В. Степаненко. – Саратов. – СГСЭУ, 2001. – С. 8.
2. Васильева А. И др., Экономический анализ наоговой реформы, Вопросы экономики., 2003., #6
3. Горский И.В., Налоговая политика России: Проблемы и перспективы, Москва, Финансы и Статистика, 2003, с. 7-9
4. Хантаева Н.Л., Теоретические основы налогообложения: Уч. пособие. – Улан-Удэ.: Издательство ВСГТУ, 2006. – 175 с.
5. Carey D. and Tchilinguirian H., Average Effective Tax Rates on Capital., Labour and Consumption., OECD Economic Department WP 258., 2000.
6. Барулин С. В., Ермакова Е. А., Степаненко В. В., Налоговый менеджмент, https://www.e-reading.club/bookreader.php/92147/Barulin_-_Nalogovyyi_menedzhment.html

*Ներկայացվել է 14.12.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.*